

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քարտուղարության կողմից 2015թ առաջին կիսամյակում կատարած աշխատանքների վերաբերյալ

2015 թվականի առաջին կիսամյակի ընթացքում մարզպետն օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակում ապահովվել է ՀՀ օրենքների, Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ Կառավարության և վարչապետի որոշումների, ինչպես նաև այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը: 2015թ. առաջին կիսամյակում մարզպետի կողմից ընդունվել են 63 որոշումներ, 83 կարգադրություններ, աշխատակազմի ղեկավարի կողմից արձակվել են 104 հրամաններ, հրավիրվել է մարզխորհրդի 1 նիստ:

2015թ առաջին կիսամյակում աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնում մուտքագրվել են 2384 և ելք են արվել 3779 փաստաթղթեր:

Մարզպետը համագործակցված աշխատանքներ է տարել հանրապետական գործադիր իշխանության մարմինների հետ:

ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմում ներկայումս առկա են հինգ թափուր քաղաքացիական ծառայության պաշտոններ աշխատանքներ են տարվում դրանց համալրման նպատակով:

2015թ ընթացքում ատեստավորման ենթակա են 28 քաղաքացիական ծառայողներ, որից՝ 1-ը բարձրագույն պաշտոն զբաղեցնող, 10-ը գլխավոր պաշտոն զբաղեցնող, 9-ը առաջատար, իսկ 8-ը կրտսեր պաշտոններ զբաղեցնող անձինք են:

2015թ. հանրապետության տարբեր ԲՈՒՀ-երում մասնագիտական վերապատրաստում կանցնեն 24 քաղաքացիական ծառայողներ:

Մարզպետարանի աշխատակազմը մեծ ուշադրություն է դարձնում քաղաքացիների ընդունելության կազմակերպմանը և վերջիններիս կողմից ներկայացված դիմումների, բողոքների և առաջարկությունների ընդունմանը, սահմանված կարգով դրանց ուսումնասիրմանը: 2015թվականի առաջին կիսամյակում մարզպետի մոտ 739 քաղաքացիների ընդունելություն է կազմակերպվել:

Կիսամյակի ընթացքում ստացվել և ՀՀ Նախագահի ու կառավարության աշխատակազմից ՀՀ Վայոց ձորի մարզպետին են վերահասցեագրվել 45 դիմումներ, որից՝ 6-ը ստացվել են Ջերմուկի, 15-ը Վայքի, 24-ը Եղեգնաձորի տարածաշրջանից: 2015թ առաջաջին կիսամյակում 513 քաղաքացու դրամական օգնություն է տրամադրվել, 68 հաշմանդամներ ստացել են առողջարանային վերականգնողական ուղեգրեր, իսկ 18-ը պետպատվերի շրջանակներում ստացել են համապատասխան բուժօգնություն: Մեր ամենօրյա ուշադրության կենտրոնում են գտնվել նաև քաղաքացիներին հուզող սոցիալ-տնտեսական, կենցաղային, գյուղ տեխնիկա և

անասուններ ձեռք բերելու, աշխատանքային, համայնքների խնդիրներին լուծում տալու հարցերը:

Մարզպետին ուղղված 739 դիմումներից դրական լուծում են ստացել 682-ը, անհիմն լինելու և մեր իրավասություններից դուրս լինելու պատճառաբանությամբ մերժվել են 36-ը, 21 դիմումների լուծումն ընթացքի մեջ է:

2015թ.1-ին կիսամյակում ՀՀ Վայոց ձորի մարզպետին են դիմել 682 քաղաքացիներ, որից՝

1. Դրամական օգնություն	513
2. Նպաստի հարցերով	5
3. Հողային վեճեր և սահմանների ճշտում	14
4. Խմելու և ոռոգման ջրի բարելավման հարցերով	11
5. Տան և շինությունների վերականգնման և վթարայնության	12
6. Աշխատանքի տեղավորման	23
7. ՏԻ մարմիններից բողոքներ և գյուղի հիմնահարցեր	8
8. Առողջարանային ուղեգրեր տրամադրելու	68
9. Պետ.պատվերով բուժօգնություն	18
10. Որդեգրման հարցերով	2
11. Երեխաներին կրթության առանձնահատուկ պայման. մեջ ընդգրկելու	7
12. Խնամակալություն և հոգեբարձություն սահմանելու խնդրանքով	1

Աշխատակազմի քարտուղարության պետ՝

Հ. Կարապետյան